

Որակի հոշակագիր Պատրաստի արտադրանքի իրացում

0 Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Պատրաստի արտադրանքի իրացում
0.2	Ոլորտը	Արդյունաբերություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Ավետիսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 523 543 Էլ. փոստ anahitavetisyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Հիմնական նպատակն է տրամադրել արդիական՝ կարճաժամկետ և տարեկան տեղեկատվություն արտադրանքի իրացման ծավալների վերաբերյալ: Ցուցանիշի հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 20-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Պատրաստի արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշը կիրառվում է արդյունաբերության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշի կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով

		իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ամսական և տարեկան պարբերականությամբ հավաքվող տեղեկություններն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեալոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեալոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Իրացված արտադրանքի ծավալը՝ հաշվետու ժամանակաշրջանում իրացված սեփական արտադրանքի, ինչպես նաև պատվիրատուի կողմից ընդունված, կատարված աշխատանքների և ծառայությունների արժեքն է՝ անկախ այն բանից, թե դրանց վճարները կազմակերպության հաշվարկային հաշվին մուտքագրվել են, թե ոչ: Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը արժեքային արտահայտությամբ հաշվարկվում է արտադրողի բացթողման գներով (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի):
1.2	Վիճակագրական հասկացություններ	Հիմնական հասկացություններ Արտադրանքի իրացման պահ է համարվում արտադրողից (վաճառողից) գնորդին դրանց սեփականության իրավունքի փոխանցման պահը: Սովորաբար դա համընկնում է արտադրանքը գնորդին կամ նրա ներկայացուցչին, կամ տրանսպորտային կազմակերպությանը (եթե պայմանագրով նախատեսված է, որ սեփականության իրավունքը անցնում է այդ պահին) հանձնելու պահի հետ: Բացառություն են կազմում

	<p>հետևյալ դեպքերը.</p> <p>ա) արտադրանքի վաճառքը կոմիսիայի, հանձնարարության (կոնսիգնացիոն) կամ գործակալության պայմանագրով. այս դեպքում իրացման պահ է համարվում արտադրանքը երրորդ կողմին հանձնելու պահը.</p> <p>բ) արտադրանքի վաճառքը, երբ արտադրողը պարտավորվում է տեղակայել այդ արտադրանքը. այս դեպքում իրացման պահ է համարվում տեղակայման աշխատանքների ավարտման պահը.</p> <p>գ) արտադրանքի վաճառքը, երբ գնորդն ընդունելու է այն տեխնիկական փորձաքննություն իրականացնելուց հետո. այս դեպքում իրացման պահ է համարվում փորձաքննության ավարտման պահը.</p> <p>դ) արտադրանքի վաճառքը՝ հետաձգված տեղափոխումով (գնորդի խնդրանքով առաքումը հետաձգվում է՝ դրանք ի պահ թողնելով արտադրողի մոտ). այս դեպքում իրացման պահ է համարվում գնորդի կողմից ըստ հաշիվների պարտավորության ընդունման պահը:</p> <p>Կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների և ծառայությունների իրացման պահ է համարվում դրանց (կամ առանձին փուլերի) ավարտման և պատվիրատուի կողմից ընդունման պահը:</p> <p>Եթե կազմակերպությունը թողարկում է կիսաֆաբրիկատներ, պատրաստուկներ, հանգույցներ, որ փոխանցում է այլ կազմակերպության (վճարովի կամ առանց վճարի) դրանք մասնակի մշակելու կամ լրիվ պատրաստվածության հասցնելու համար, իսկ այնուհետև դրանք ետ է ստանում և օգտագործում պատրաստի իրերի արտադրության համար, ապա իրացված արտադրանքի ծավալ մտցվում է միայն պատրաստի իրերի արժեքը, երբ դրանց արտադրությունն ամբողջովին ավարտվել է և փաստորեն հանձնվել</p>
--	---

		<p>օգտագործողին:</p> <p>Պատվիրատուի հումքից և նյութերից (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում) թողարկված արտադրանքը իրացված արտադրանքի ծավալում ներառվում է մշակման արժեքի չափով, այսինքն առանց պատվիրատուի հումքի և նյութերի արժեքի:</p> <p>Ճյուղային ընդգրկունություն</p> <p>Վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ հանքագործական արդյունաբերություն (բաժին B), մշակող արդյունաբերություն (բաժին C), էլեկտրաէներգիայի, գազի, գոլոշու և լավորակ օդի մատակարարում (բաժին D), ջրամատակարարում, կոյուղու, թափոնների կառավարում և վերամշակում (բաժին E) գործունեության տեսակները:</p> <p>ՏԳՏՀԴ խմբ. 2-ի 05, 06 և 09 հատվածները ներառված չեն՝ այդ գործունեությունների բացակայությամբ պայմանավորված:</p> <p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p> <p>Հրապարակման խմբավորումներ</p> <p>Տվյալները հրապարկվում են մոտ 30 արդյունաբերական խմբավորումներով: Կազմակերպությունների արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշը հրապարակվում է նաև ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի՝ գերփոքր (մինչև 9 մարդ), փոքր (10-49 մարդ), միջին (50-249 մարդ) և խոշոր (250 և ավել մարդ):</p>
--	--	--

2 Ժամանակայնություն

2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական, տարեկան
-----	--------------------------	------------------

2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական առաջին հրապարակումը՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական, տարեկան
3 Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Հիմնական տեղեկատվությունը հավաքվում է ինչպես կազմակերպություններից, այնպես էլ անհատ ձեռնարկատերերից, ընդ որում խոշոր և միջին (51-ից ավել աշխատող ունեցող) 1300 կազմակերպությունները դիտարկման մեջ ընդգրկված են համատարած, ինչն ապահովում է ճշգրտության բարձր աստիճան: Վերջիններս տեղեկատվությունը ներկայացնում են ամսական պարբերականությամբ: Փոքր և զերփոքր կազմակերպություններից (0-50 աշխատող) և անհատ ձեռնարկատերերից՝ թվով 1160 սուբյեկտ, տեղեկատվությունը հավաքվում է ընտրանքային կարգով՝ եռամսյակային պարբերականությամբ:</p> <p>Ընտրանքի իրականացման համար գլխավոր համակցության ձևավորման նպատակով կիրառվում է վիճակագրական բիզնես ռեգիստրը: Ընտրանքը ստրատիֆիկացված է ըստ գործունեության տեսակների (NACE2 դասակարգչի խմբավորմանը համապատասխան) և աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և, առկա ռեսուրսներով պայմանավորված, կազմում է 30-35%: Այսպիսով, տեղեկատվությունը հավաքվում է ընդհանուր առմամբ 2460 տնտեսվարող սուբյեկտից:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	Դիտարկման ընթացքում առաջացող անճշտությունների աղբյուր կարող են հանդիսանալ ընտրանքի սխալը, տեղեկություն տրամադրողների կողմից պատասխանների բացակայությունը, բիզնես ռեգիստրում առկա տեղեկատվության անճշտությունները

		(գործունեության տեսակի ոչ ճիշտ որոշումը կամ դրա փոփոխությունը տարվա ընթացքում) և այլն: Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից նախորդ տարվա վերաբերյալ ներկայացված տվյալների ճշգրտությունը (ընթացիկ գներով) իրականացվում է նախորդ տարի (տվյալ ժամանակաշրջանի համար) ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով: Սահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Պատասխանների մակարդակը կազմում է մոտ 98%, ընտրանքի սխալի չափը չի գերազանցում 5%:
4 Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ. ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄՍԿ): Սկսած 2002թ. ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված ԵՄ վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE Rev1 հիման վրա): 2010թ. կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ կազմակերպությունների տնտեսական գործունեության հետազոտության) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով: Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5 Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Հրապարակումներ

	<p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն)</p> <p>Ամսական հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն):</p> <p>«Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման» վիճակագրական տեղեկագիր (հայերեն):</p> <p>Եռամսյակային հրապարակումներ</p> <p>«Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, մարզերով» վիճակագրական տեղեկագիր (հայերեն):</p> <p>Կիսամյակային հրապարակումներ</p> <p>«Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների հնգանիշ դասակարգման» վիճակագրական տեղեկագիր (հայերեն):</p> <p>Տարեկան հրապարակումներ</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>«Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության</p>
--	--

		<p>տեսակների երկնիշ դասակարգման» վիճակագրական տեղեկագիր (հայերեն):</p> <p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար.</p> <p>ա/ իրավաբանական անձի ծածկագիրը</p> <p>բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),</p> <p>գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը,</p> <p>դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը,</p> <p>ե/ կազմակերպական-իրավական ձևը,</p> <p>զ/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն,</p> <p>է/ գործունեության հիմնական տեսակը,</p> <p>ը/ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված զուտ հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի),</p> <p>թ/ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը: Անհատ ձեռնարկատերերի համար.</p> <p>ա/ անունը, ազգանունը,</p>

		<p>բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),</p> <p>գ/ պետական ռեզիստրում գրանցման համարը,</p> <p>դ/ պետական գրանցման ամսաթիվը,</p> <p>ե/ բնակության վայրը,</p> <p>զ/ պետական գրանցման վայրը (եթե չի համընկնում բնակության վայրի հետ), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն,</p> <p>է/ գործունեության հիմնական տեսակը,</p> <p>ը/ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված զուտ հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի),</p> <p>թ/ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը:</p>
5.3	Փաստաթղթավորումը	<p>Արմստատի պաշտոնական կայքի «Վիճակագրություն» հատվածի «Մեթատվյալներ ենթահատվածում առկա է նաև լրացուցի փաստաթղթավորում Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների Տարածման Հատուկ Մտանդարտին համապատասխան, հայերեն, ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով՝</p> <p>https://www.armstat.am/am/?nid=549:</p>
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշի հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. հոկտեմբերի 19-ի «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 25-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ում ու «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին»</p>

		թիվ 25-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում:
6 Լրացուցիչ փաստաթղթավորում		
		Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373 :